

**Universitäts- und Landesbibliothek Bonn**

**Manr Usmunk'**

**I Moskua, 1874**

**urn:nbn:de:hbz:5:1-60420**

Gössen 3442

*Journal 3442*

# ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՈՒ

### ՀԱՅԿԱՁՆԵԱՅ ՄԱՆԿԱՆՑ

"Գիտասցես՝ թէ որպէս պարտ  
լից քեզ ՚ի տան Աստուծոյ  
շրջել" (մ. Տէօ. թ. 15):

ԳՐԵԱԼ

Ի ՄԱՐՐԱՅ ՄԱԴԻՍՏՐՈՒ

Զ Շ Խ Ա Յ Ա Յ Ա Յ :

— — — — —

Ի ՄՈՇԿԱՐ:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐՄԱՐԱՅ ՄԱՐԲԱՆՑ

1874.

3442

Дозволено цензурою. С.-Петербургъ, 7-го Октября 1873 г.

Tous droits réservés.

Imprim. W. Gautier, au pont des Maréchaux, maison Torletzky.

## Ա Զ Դ

Ի լոյս ընծայելով իմ հանգուցեալ ծնողիս՝ Մսերայ Մագիստրոսի Մսերեանց՝ „Մանչ Ուսնուն+ Սպահային Եշէղէցական Պատմունեան“ վերնազրով դասառական տետրը, որ գրուած էր դեռ ՚ի 1856 թուին, ևս յոյս ունիմ՝ թէ մեր համազգիք՝ տեսանելով սոյն այս երկասիրութեանս պիտանաւորութիւնը մեր մանկանց կրթութեան համար, սիրով ընդունեն և ՚ի գործ դնեն զայն մեր ազգային դպրոցաց մէջ, որպէս ՚ի գործ են դրած մինչեւ ցայժմ՝ իմ ծնողիս նոյն „Մանչ Ուսնուն+“ վերնազրով միւս կրօնական մատենիկները, որք յարմարուած լինելով ծխական դպրոցների, և կամ գիմնազիաների ստորին դասատանց պահանջողութեանց, ևս և զրուած լինելով դիւրին և հասկանալի, բայց և կանոնաւոր ոճով, միշտ օդտակար եղած են, և պիտի լինին :

Օւաչնայք Մաելեանց :

„Պատրաստք իցէք տալ պատաօխանիւ ամենայնին  
որ խնդրիցէ զբանննա:

ՊԵՐՈՒ ԹԱՂԻՆ Ա ԴԼ Ֆ ՀՅՐ 15 :

# ՀԵՐՑՈՒԹԵՐ ԵՒ ՅԵՆԻ:

## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Համառօտ Պատմութիւն սկզբնաւորութեան և  
նշանաւոր անցից Հայաստանեայց եկեղեցւոյ:

1. Ե՞րբ ծագեցաւ Քրիստոնէութեան լոյսն՝ Եջ. Հայաստան աշխարհումը: ..... 1.
2. Արդար թագաւորի Քրիստոնէական հաւատքը ընդունելն ինչպէս եղե: ..... 2.
3. Վրիստոսի անձեռագործ պատկերն, և առ Արդար թագաւորն զրած թուղթն, ինչ եղեն և ո՞ր տեղ մնացին: ..... 3.
4. Ո՞րն յԱռաքելոց լուսաւորեց մեր Ազգը, և հիմնեց եկեղեցի Հայաստանումը: ..... 4.
5. Ի՞աց ՚ի թագեսս Առաքելոյ՝ ուրիշ ո՞ր Առաքեալներ եկին ՚ի Հայաստան՝ սուրբ Աւետարանը քարոզելոյ: ..... —
6. Ո՞ր տեղ և ի՞նչպէս եղե թագեսս Առաքելոյ նահատակութիւնն: ..... 5.
7. Թագեսս և բարթողումէսս Առաքեալներից յետոյ՝ որո՞նք եղեն Հայոց եկեղեցւոյ Հովիք: ..... 6.
8. Առաջին՝ երկրորդ՝ և երրորդ դարերումը ի՞նչ լեզուաւ լինում էին մեր եկեղեցական ընթերցմունքն: ..... —
9. Առաջին երեք դարերումը՝ մեր Ազգումը եկեղեցական ժողով գումարուեցան: ..... 7.
10. Ի՞նչպէս տարածուեցաւ Քրիստոնէական հաւատքն Հայաստանումը՝ Տրդատ թագաւորի ժամանակ: ..... —

11. Յօր լեզուէ թարգմանեցաւ մեր Աստուածաշունչն, և որոյ աշխատութեամք: .... 8.
12. Բաց յԱստուածաշնչէ՝ ուրիշ ի՞նչ հոգեսոր գրեանք թարգմանուեցան մեր լեզուումը հինգերորդ դարում: ..... 9.
13. Որո՞նք են մեր Եկեղեցական գրեանքն, և ով եղեւ անոնց գրողն կամ հեղինակն: ... 10.
14. Ո՞ր տիեզերական ժողովքներումը դաշնուեցան մեր Հայրապետքն: ..... 11.
15. Հայոց եկեղեցին ունի՞ զանազանութիւն Յունաց և Լատինացւոց եկեղեցիներից: .. —
16. Մեր ազգէն հերետիկոսներ եղած են: ... 12.
17. Առաջ Սարգսի պահքն ի՞նչ պատճառաւ կոչուում է „Առաջաւորաց պահք“: ..... 13.
18. Ի՞նչ պատճառաւ՝ Քրիստոսի այլակերպութեան տօնն կոչի մեր լեզուումը „Վարդավառ“: 14.
19. Օ՞ի՞նչ նշանակէ „Ճբագալոյց“ բառն, և ի՞նչ պատճառաւ այսպէս կոչի մեր Ազգումը՝ Քրիստոսի Ծննդեան և Զատկի առաջին երեկոյն: ..... —
20. Օ՞ի՞նչ նշանակէ բառս „Տեառնընդառաջ“ և ի՞նչ է իմացուում այնով: ..... 15.
21. Ի՞նչ պատճառաւ կամ խորհրդով Տեառնընդառաջի նախատօնակին կրակ վառեմք եկեղեցումը: ..... 16.
22. Օ՞ի՞նչ նշանակէ „Զատիկ“ բառն, և ի՞նչ պատճառաւ այսպէս կոչի Քրիստոսի յարութեան յատուկ տօնն: ..... 17.
23. Ի՞նչ խորհուրդ ունի եկեղեցւոյ մէջ մէկ մէկի ողջոյն տալն պատարագի ժամանակ: 18.
24. Աւտի՞ է եկեղեցումը պատարագէն յետոյ Մաս բաժանելոյ սովորութիւնն: ..., .... 19.

25. Խոչ է պատճառ՝ որ մեր ազգն զքրիստոսի ծննդեան տօնը Յունվարի 6 ին կկատարէ. իսկ ուրիշ քրիստոնեայ ազգերն Դեկտեմբերի 25 ին կկատարեն: ..... 20.
26. Օատկի օրը՝ քահանայից սպիտակ շուրջառով զգեստաւորիլն, և տիրացուաց սպիտակ շապիկ հազնիլն՝ ի՞նչ խորհուրդ ունի: 24.
27. Եշրբ՝ ուր՝ և ինչու համար գումարուեցաւ առաջին Տիեզերական ժողովն: ..... 25.
28. Եշրբ, ուր՝ և ինչու համար եղեւ երկրորդ Տիեզերական ժողովն: ..... 27.
29. Եշրբ, ուր՝ և ինչու համար եղեւ երրորդ Տիեզերական ժողովն: ..... 28.
30. Եշրբ և ինչու համար եղեւ քաղկեդոնի ժողովն: ..... 31.
31. Որո՞նք եղեն հայածողք Քրիստոնէից առաջին դարերումը: ..... 33.
32. Ազգային եկեղեցական ժողով գումարելոյ Սովորութիւնն երբ սկսուեցաւ մեր ազգի մէջ: ..... 36.
33. Չորրորդ դարում գումարուած ազգային եկեղեցական ժողովներն որո՞նք են: ..... 37.
34. Մեր ազգի մէջ քանի ազգային եկեղեցական ժողով գումարուեցաւ մինչեւ ցայժմ: ..... 39.
35. Աստուածային պաշտամանց տեղիքն ուրո՞նք էին Հայաստանի մէջ՝ առաջին երեք դարերում: ..... 40.

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ:

Համառօտ Նկարագիրը երևելի Արանց և  
Տեղեաց, յիշատակելոց յԱղպային Եկեղե-  
ցական Պատմութեան:

1. Աբդար.....	41.
2. Ագոթանգեղոս.....	42.
3. Արիստակէս.....	—
4. Բարթուղիմէսս Առաքեալ.....	—
5. Գրիգոր Լուսաւորիչ.....	43.
6. Գրիգոր Մագիստրոս.....	—
7. Գրիգոր Նարեկացի.....	44.
8. Գաւիթ Անյաղթ.....	45.
9. Եղնիկ.....	—
10. Եղեշ.....	46.
11. Բնծաքիարս.....	47.
12. Ծծաղէսս Առաքեալ.....	—
13. Ժեռակրի.....	48.
14. Հայկաշէն.....	—
15. Հեղինէ.....	—
16. Մեսրոպ.....	49.
17. Յովհան Մանդակունի.....	51.
18. Ներսէս Լամբրոնացի.....	—
19. Ներսէս Շնարհալի.....	52.
20. Ուշկան.....	53.
21. Ջուղայ.....	54.
22. Վաղարշապատ.....	—
23. Վրթանէս և նորա որդիքն.....	55.
24. Օտայ.....	56.



# ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ԱԶԳԱՑԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

41. Համառօտ Պատմութիւն սկզբնաւորութեան և  
42. նշանաւոր անցից Հայաստանեայց եկեղեցւոյ:

43. 1.

44. Երբ ծագեցաւ Քրիստոնէութեան  
45. լոյն Հայաստան աշխարհումը:

46. 47. Քրիստոնէութեան լոյսն Հայաստանի  
48. մէջ ծագեցաւ նախ և առաջ մեր երանելի  
49. Երգար թագաւորի ժամանակ՝ 32 թուակա-  
50. նին Քրիստոսի՝ Թաղէոս Եռաքելոյ քարո-  
51. զութեամբ. և յետոյ աւելի պայծառ՝ Տըր-  
52. դատ թագաւորի ժամանակ՝ 302 թուականին  
53. Քրիստոսի՝ Արքոյն Գրիգորի քարոզու-  
54. թեամբ, որ իրաւամբք կոչուեցաւ „Լու-  
55. ստորէն Հայոց“:

2.

Աբգար Աստվածութիւն Քրիստոնէական հաստոքուլ  
ընդունելու ի՞նչպէս եղլ :

Աբգար թագաւորն՝ որ նստէր Եղեսիա քա-  
ղաքումը, Կրիստոսի հրաշագործութիւն-  
ները լսելով՝ Անանէ անունով իւր հաւա-  
տարիմ նախարարը դեսպան ուղարկեց նորա-  
մօտ յԵրուսաղէմ, և խնդրեց յատուկ աղա-  
չանաց թղթովն՝ որ գայ իւր հիւանդու-  
թիւնը բժշկէ. և մի նկարիչ ևս ուղարկեց,  
որ եթէ չկամենայ զալ՝ պատկերը նկարէ և  
բերէ: Յիսուս ընդունելով Աբգարի թուղթը՝  
պատասխան զրել տուաւ թռովմաս Առաքելոյ  
ձեռամբ, թէ ինքն յետ երկինքը համբառ-  
նալոյ կուղարկէ նորա մօտ իւր աշակերտաց  
մինը, որ նորա ցաւը բժշկէ: Ծաց յայսմանէ  
ուղարկեց նաև իւր անձեռագործ պատկերը՝  
գաստառակի վերայ նկարած:

Աբգար ուրախութեամբ ընդունելով  
զթուղթը և զպատկերը՝ հաստատուեցաւ  
իւր սուրբ հաւատքումը, և Կրիստոնեայ  
թագաւորաց առաջինն եղեւ:

3.

Վրբիստոսի անյեւագործ պատկերն, և առ  
Աբգար թագաւորին ժըստ թուղթն, է՞նչ  
եղեն և ո՞չ աել ճառցին:

Քրիստոսի անձեռագործ պատկերն, և  
առ մեր Սրբար թագաւորն զրած թուղթն  
մինչ 'ի 944 թուականն պահուած կային  
Եղեսիա քաղաքումը: Ըստց նոյն թուա-  
կանին՝ Յունաց կայսրն Ոստմանոս Վաշտա-  
կեան (որ Հայոց ազգէն էր) հաճեցնելով  
Եղեսիայի այլազգի ամիրայն՝ քերել տուաւ  
զանոնք Կոստանդնուպօլիս, և դնել տուաւ  
սուրբ Աստուածածնի տաճարումը:

Յետ ժամանակաց զթուղթը դարձեալ  
տարան Եղեսիա, և գարցեալ բերին Կո-  
ստանդնուպօլիս՝ 1030 թուականին: Ըստց  
վերջը՝ 1325 թուականին զողացուեցաւ, և  
մնաց անյայտ մինչեւ ցայսօր:

Դակ պատկերը յետ ժամանակաց Կո-  
ստանդնուպօլսէն տարան Հռոմ: և այն  
տեղ է, ասեն, մինչեւ ցայժմ:

4.

Ո՞ւ յԱռածելոց ըստուրեց մեջ Աղիք,  
և հիմնեց Եկեղեցի Հայաստանութեա:

Մեր Սզզը լուսաւորեց Քրիստոնէական  
հաւատով՝ նախ սուրբ Առաքեալն Խաղէոս՝  
Թռվմաս Առաքելոյ եղբայրն, որ յետ Քրի-  
ստոսի համբարձման Եղեսիա գնալով՝ մկրո-  
տեց ոչ միայն զԵրդար թագաւորը և զնորա  
Կախարաբները, այլ և զժողովուրդի մեծ  
մասը, և շինեց եկեղեցիներ թէ Եղեսիայի  
մէջ և թէ ուրիշ քաղաքներումը. և ձեռ-  
նաղրեց եպիսկոպոսներ, որոց մինն էր Խէ-  
ռփիլոս, որ Անօարիոյ Առաջնորդ եղեւ:

5.

Իսոց ՚է Թագիւու Առածելոյ՝ ուրէւ ո՞՛  
Առածեալներ Եկին ՚է Հայաստան՝ ուրէ  
Աւետարանը Դարնուլոյ:

Յետ Խաղէոս Առաքելոյ մահուան՝ եկին  
՚ի Հայաստան սուրբ Առաքեալքն Բարթո-  
ղոմէոս, Յուղա Խաղէոս և Շմաւոն Կա-

խանձայոյլ, նաև առաջին թաղեստի աշակերտքն՝ Եղիշէ և Ատաթէոս։ Եւ շատ ժողովուրդ Քրիստոնէական հաւատքի դարձընելէն յետոյ Մհծ և Փոքր Հայաստանի մէջ՝ նահատակուեցան այլեայլ տեղերումը։

6.

Ո՞ւ ո՞ւ և բնալու ելւ թագեաս  
Առաջելոյ նահատակունիւննեն։

Թաղեստ Եռաքեալն երբ որ Կապաղովկիայումն էր՝ լսելով, թէ Երդարու քեռորդին, Աանատրուկ թագաւորն, Քրիստոնէական հաւատքը թողած է, կամեցաւ զնալ նորամօտ. և Ճանապարհին պատահելով Հռովմայեցւոց զեսպաններուն (որ հինգ հոգի էին, և զնում էին Աանատրուկի մօտ)՝ դարձոյց զանոնք Քրիստոնէական հաւատքի, և մկրտեց։

Աանատրուկ լսելով այս անցքը կանչեց թաղեստին Շաւարշան քաղաքը, և սպանել տուտւ 48 թուականին։

Յօհանիս և Բարձրականեան Առածեալներից  
յետոյ՝ որոն+ Եղբա Հայոց Եկեղեց-ոյ  
Հոգիւ+ :

Յօհանիս և Բարթողոմէոս Առաքեալներից  
յետոյ՝ Հայոց Եկեղեցւոյ Հովիւք Եղեն ա-  
նոնցմէ ձեռնադրած եպիսկոպոսներն զանազան  
քաղաքներումը մինչև Գրիգոր Լուսաւոր-  
չի ժամանակը. որոց մի քանիսի անուանքն  
յայտնի են մեզ Պատմութիւններից, ինչպէս՝  
Սղոց, Աքիաս, Օքաքարիա, Յօհովիլոս, Առմ-  
սի, Բարսումա, Մեհրուժան, և ուրիշներն:

Առաջն՝ Երիբորդ՝ և Երրորդ Դարերու-մը  
ինչ լւսու-մ լինում էին մեր Եկեղեցական  
ընթերցաւունուն:

Առաջին՝ Երկրորդ՝ և Երրորդ դարերումը  
մեր Եկեղեցական ընթերցմունքն և աղօթք-  
ներն կատարւում էին բուն Հայոց լեզուաւ,  
բայց հին և նոր Ատակարանաց գրեանքն

կարդացուում էին Յունաց կամ Ասորւոց  
լեզուաւ, որովհետեւ Մեսրոպեան գրերն զեռ  
չէին հնարուած, և Աստուածաշունչն չէր  
թարգմանուած:

9.

Առաջին երեւ դարերուայը մեր Աշխայը  
եկեղեցական ժողով գումարուեցաւ:

Առաջին երեք դարերումը՝ մեր Ազգումը  
ամենեին հարկ չեղեւ ժողով գումարելոյ,  
որովհետեւ ոչ մի հերետիկոսութիւն չծա-  
ղեցաւ մեր մէջ, և ոչ ուրիշ ազգաց մէջ  
եղած հերետիկոսութիւններուն հետեւող  
մարդ գտանուեցաւ մեր Ազգին:

10.

Խուլակո առարածուացաւ Քրիստոնէական  
հաստատուին Հայաստանուայը՝ Տէ՛տասու  
լաբառորի ժամանակ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քարոզու-  
թեամբ և վարդապետութեամբ՝ բոլոր Հայոց

Եզզն թաղաւորի հետ ՚ի միասին ընդու~  
նեցին Քրիստոնէական սուրբ հաւատքը :  
Դրիգոր Լուսաւորիչ ձեռնադրուելով Գե~  
ւոնդիոսէն (որ Անսարիոյ Հայրապետն էր՝  
Թագէոս Առաքելոյ յաջորդ), կարգուեցաւ  
Հոգեւոր Գլուխ Հայոց հկեղեցւոյ. շինուե~  
ցան աղօթարաններ և սռւրբ տաճարներ  
երկու հազարէն աւելի, և հինգ հարիւրի  
չափ վեճակաւոր եպիսկոպոսներ դրուեցան  
զանազան քաղաքներում :

---

11.

Յ՞ր լեզու-է նարդանեցաւ մեր Աստուածա~  
շունչն, և որո՞ աշխարհանեամբ :

Հին Կտակարանը նախ թարգմանեց սուրբ  
Ասհակ Հայրապետն Ասորւոց լեզուէն՝ 411  
թուականին, որովհետև Աստուածաշնչի Յու~  
նական օրինակին չէր գտնուում Հայաստա~  
նումը : «Եոյն ժամանակին սուրբն Անսարոպ  
թարգմանեց «Եոր Կտակարանը Յունաց աշ~  
խարհումը : Յետոյ երբ որ գտան ընտիր օրի~

նակ հին և նոր Կտակարանի Յունաց լեզուաւ գրուած, նորէն համեմատելով թարգմանեցին իւրեանց աշակերտաց օգնականութեամբ՝ 433 թուականին :

Այս թարգմանութիւնս այնքան ճիշդ է և ընտիր, մինչև Խորենացւոյ Պատմութեան Ենդղիացի թարգմանիչքն զարմանալով զրեն, թէ „Հայոց Աստուածաշունչն թագուհի է ամենայն թարգմանութեանց“ . և Յովհաննէս Աքրոտէր Գերմանացին զրէ, „Եյնքան ընտիր է Աստուածաշնչի Հայերէն թարգմանութիւնն, մինչև արժան է այնով ուղղագրել բուն Յունարէն Աստուածաշունչը :“

12.

Բաց յԱստուածաշնչ՝ սուրէլ ի՞նչ հոգեւոր  
գրեանու նարդառանուեցան մէջ լեզուամբ՝  
հինգերորդ դարում :

Առլին Մեսրոպ մեր Հայկական գրերը  
նորէն հնարելէն և կարգաւորելէն յիտոյ,  
թարգմանեց՝ և թարգմանել տուաւ իւր

աշակերտներուն 'ի Յունաց լեզուէ գեղեցիկ  
Հայկաբանութեամբ նաև հին վարդապետաց  
երեւելի և հարկաւոր զրուածքները, ինչպէս  
Քարսեղ Ահսարացիի, Յովհան Ասկերերանի,  
և ուրիշներու որոնցմէ ոմանք մնացին, և  
շատերն կորան զանազան պատճառներով :

---

13.

Ար՞նե՞ւ են մեր Եկեղեցական քրեանուն, և ո՞վ  
եղեւ անոնց ժընչն էամ հեղինակն :

Մեր Եկեղեցական զրեանքն են՝ Ժամա-  
ժէր+, Տօնացոյց, Խորհրդատետը, Շատրւակն,  
Կոչուաշն : Եյս հինգ գիրքը նախ զրեցին  
սուրբ Աահակ հայրապետն մեր և երանելի  
Մեսրոպ վարդապետն . և ապա նոցա ա-  
շակերտքն՝ Գիւտ և Յովհան Մանդակունի՝  
աւելի կարգազրեցին և հարստացուցին զա-  
նազան ազօթքներով : Աերջին գիրքն՝ այ-  
սինքն Կիսարանն՝ կոչուեցաւ ևս Մաշտոց  
սուրբ Մեսրոպայ անուամբն, որովհետեւ  
նորա առաջին անունն Մաշտոց էր :

---

14.

Ո՞ւ այեղեքական ժողովուներուամբ գոտանուեցան  
մեր Հայրապետութիւն :

‘Սիկիոյ առաջին ժողովքումը (որ եղե  
325 թուին) գտանուեցաւ սուրբն Արիս-  
տակէս՝ Գրիգոր Լուսաւորչի փոքր որդին:  
Կոստանդնուպօլսի ժողովքումը (որ եղե  
381 թուին) գտանուեցաւ մեծն Արքէս:  
Եփեսոսի ժողովքումը (որ եղե 431 թուին)  
հրաւիրուած էր Ատհակ Պարթև։ Բայց  
չկարողանալով գնալ այն տեղ՝ զրով յայտ-  
նեց իւր հաւանութիւնը այն ժողովքի կա-  
նոնները ընդունելոյ։

Այս պատճառաւ այս երեք ժողովոց տօն  
կատարելոյ սովորութիւն ունի մեր եկե-  
ղեցին։

15.

Հայոց եկեղեցին առաք զանազանութիւն Յունաց  
և Հայութեաց եկեղեցիներից :

Հայոց եկեղեցին հաւատոյ կողմանէ ա-  
մենեին չունի զանազանութիւն Յունաց

եկեղեցիէն, այլ միայն ծէսերով՝ պատարագի արարողութեան և տօնախմբութեանց մէջ, և այլն։ Բայց Լատինացւոց եկեղեցիէն կը զանազանուի ոչ միայն ծէսերով, այլ և հաւատքով և դաւանութեամբ, որովհետեւ Լատին եկեղեցին՝ տասներորդ դարէն յետոյ՝ նոր նոր վարդապետութիւններ աւելցոյց ՚ի մասին հաւատոյ (ինչպէս Հոգւոյն սրբոյ բղիսումն յԱրդւոյ, և այլն), և այնով ևս բաժանուեցաւ թէ Հայոց և թէ Յունաց եկեղեցիէն։

16.

Մեր աշխէն հերետիկունէր եղած էն։

Մեր ազգէն ամենևին հերետիկոս եղած չկայ. և ոչ մի մարդ մեղանից ժողովքների մէջ դատապարտուած չէ՝ Քրիստոնէութեան սկիզբէն մինչև ցայժմ։ Տռէպէտ Յունաց Փոտ Պատրիարքն յիշում է իրեն մի պրքումը Պօղոս անունով մէկ Հայ հերետիկոս, որ գլուխ եղել Պաւլիկեան աղան-

դաւորներու. բայց մեր Ազգի հարազատ  
Պատմութիւնէն գիտեմք՝ որ այն Պօղոսն  
չայ չէր, այլ Յոյն էր կամ Ասորի՝ չայ-  
աստանումը բնակուած։ Միայն Թոննդրա-  
կեցւոց աղանդն բուսաւ և չորացաւ մեր  
ազգի միջումը։

17.

Առաջն Սարդով պահին չ' ու պահած ու պահած  
է „Առաջարարաց պահի“։

Գրիգոր Լուսաւորիչն Տրդատ թագաւո-  
րին մկրտելէն առաջ՝ հինգ օր ծոմ պահել  
տուաւ թագաւորին և նախարարներուն, և  
պատուիրեց՝ որ ամենայն տարի նոյնակա-  
պահեն։ Եւ այս պահքս՝ որովհետեւ առա-  
ջին եղեւ մեր Ազգումը, և Ազուհացից  
պահքէն ևս երկու շաբաթով առաջ է, այն  
պատճառաւ կոչուեցաւ „Առաջարարի կամ  
Առաջարարաց պահի“։ Յետոյ կաչուեցաւ  
„Առաջ Սարդով պահի“, այն պատճառաւ՝  
որ սուրբ Ասրդսի զօրավարի տօնն՝ այն  
պահքոց շաբաթ օրը կատարել սկսան։

18.

Ե՞նչ այս որ մ տառ առ ա ք ք ի ո յ լ ո կ ե ր պ ո ւ թ ե ա ն  
ի ա մ ա մ ա լ ա յ ց մ տ ա ռ ի ե ր ա լ ո ւ թ ե ա ն ա ս ն ի ս ն ի մ ե ր  
լ է ո ւ ս ս ո ւ մ ը „Ա լ ա բ ր դ ո ւ զ ո ւ ս ս “ :

Մեր Ազգումը՝ Վրիստոնէութենէն առաջ՝  
Ենահիտ շաստուածուհւոյն տօնն կատա-  
րուում էր վարդի առատութեան ժամա-  
նակը, և նորա պատկերը և մեհեանը զար-  
դարում էին վարդերով. ուստի և այն տօնն  
կոչուում էր „Ա պ ա լ ո ւ զ ո ւ ս ս “, այսինքն՝ վար-  
դերով վառուած կամ զարդարուած: Բայց  
յետ Վրիստոնէութեան՝ Վրիգոր Լուսա-  
ւորիչ՝ այս կռապաշտական տօնի տեղ սահ-  
մանեց Վրիստոսի Այլակերպութեան տօնը:  
Թէպէտ տօնն փոխուեցաւ, բայց տօնի ա-  
նունն անփոփոխ մնալով՝ կոչուում է մինչեւ  
ցայսօր „Ա պ ա լ ո ւ զ ո ւ ս ս “:

19.

Օ ք ն չ ն շ ա ն ա կ է „Ճ ր ա դ ա լ ո յ ց “ բ ա ռ ա ն, և ի ն չ  
ա յ տ ա մ ա ս ս ս ս ա յ ս պ ի ս ի մ ե ր Ա զ դ ո ւ մ ը՝ Ք ր ի ս  
ս ս ս ս ի Շ ն ն դ ե ա ն և Զ ա ս ս ի ս ս ա յ զ ի ն ե ր ե կ ո յ ն :

“Ճ ր ա դ ա լ ո յ ց “ բ ա ռ ն ն շ ա ն ա կ է Ճ ր ա գ ն ե ր ու  
վ ա ռ ո ւ ի լ ը, ի ն չ պ է ս և Լ ա տ ի ն ա կ ա ն ա լ ո ւ մ ը :

ՀՅԱՆԱՐԵՒՄ “ բառն։ Աատինք այս բառովս  
իմանան՝ եկեղեցւոյ երեկոյեան ընթերցմունքը  
(այսինքն՝ երեկոյեան ժամասացութիւնը),  
որովհետեւ հին ժամանակը կկատարէին զայն՝  
օրը մթնելոյ ժամանակին՝ ճրագներ վառելով  
եկեղեցւոյ մէջ։ Բայց մեր Ազգումը սովորու-  
թիւն եղեւ „Ճշադտալոյց կամ Ճշադտալոյն“  
ասել՝ միայն Քրիստոսի օննդեան և Օատկի  
նախատօնակի երեկոյներին։ Վասն զի այս եր-  
կու տօնքս քան զամեն տօներն երևելի և զե-  
րազանց լինելով՝ նոցա նախատօնակի երե-  
կոյները աւելի ճրագավառութիւն լինի եկե-  
ղեցւոյ մէջ։

20.

„Օչն նշանակէ Բ և Տ Սեպանովնութեան կազմը“  
և չոն է իմացուանայ այնով։

„Սեպանովնութեան կազմը“ նշանակէ Տիրոջ  
առջեր ելանող։ և այսով մեր լեզուումը  
կիմացուի այն տօնն՝ որ կկատարուի ՚ի յի-  
շատակ Քրիստոսի տաճարը գնալոյն՝ քա-  
ռասուն օրուան եղած ժամանակը։ Վասն

զե՞ Քրիստոս տաճարը դնալովն՝ իբրև թէ  
Տիրոջ (այսինքն՝ Աստուծոյ) առջեր ելաւ  
և ընծայուեցաւ. կամ թէ՝ այն օրը Ոիմէօն  
ծերունին և Եննա մարգարէն (որ տաճարի  
մէջն էին) Քրիստոսի առջեր եկան, և Ոի-  
մէօն իւր զիրկը առնլով զՔրիստոս՝ փառք  
տուաւ Աստուծոյ, ինչպէս զրուած է սուրբ  
Աւետարանումը:

21.

Ի՞նչ ուսումնառութեան էամ խորհրդում Տեսանունութեան ջէ  
նախառութեանուննին էրակ վառեամ+ եկեղեցնութէ:

Տեսանընդառաջի նախատօնակին (փե-  
տրուարի 13) եկեղեցումը կրակ վառելն՝ ոչ  
թէ կռապաշտութեան ժամանակից մնացած  
սովորութիւնն է (ինչպէս կարծեցին ոմանք),  
այլ՝ ուրիշ խորհուրդ և ուրիշ պատճառ  
ունի. և այս է: Որովհետեւ այն օրուան  
Աւետարանումը կարգացուում են Ոիմէօն  
ծերունիի բանքն, որ գՔրիստոս „Լայա հե-  
նանուաց“ կոչեց, և Քրիստոսի բանն՝ որ  
ասաց յետոյ „Հու-ը եկեղեց աշխանել յերնել“

(այսինքն „Եկի՝ Աստուածային սիրոյ կրակը  
մարդոց սրտումը ձգել“), չայոց եկեղեցին  
այս բաները զգալի կերպով տպաւորելոյ  
համար լսողաց մտքումը, սովորութիւն է  
արած կրակ վառելը:

22.

Օքնշ նշանակէ „Զատէի՛ բառն, և ի՞նչ  
աղաքանական այսպէս ի՞նչ քը իսպոսի յարու-  
թեան յարութիւնն :

„Զատէի՛ նշանակէ՝ զատութել՝ բաժա-  
նուել կամ” անցէ, և Եբրայեցւոց „Պասեք“  
կամ „Փասախ“ բառի թարգմանութիւնն է:  
Եբրայեցիք այս բառովս իմանան այն տօ-  
նը՝ որ կատարեն իւրեանց ազատութեան  
համար Փարաւոնի ձեռքից՝ Եղիպտոսէն  
զատութելով, և Կարմիր ծովէն անցանելով:  
Բայց մեք կիմանամք Քրիստոսի յարու-  
թեան յատուկ տօնը, որովհետեւ Քրիստոսի  
յարութեան շնորհիւ նոր և հոգեւոր ազա-  
տութիւն ստացաք :

23.

Ե՞նչ իսորհութ առաջ եկեղեցաւոյ մէջ մէկ մէկ  
ողջոյն պաշտ պատրիարքի ժամանակ:

Ըստ պատուիրանին՝ Քրիստոսի՝ պատարագ մատուցանօղն պարտական է՝ նախ հաշտուիլ իւր ընկերի հետ, և յետոյ պատարագը մատուցանել: Եւ Պօղոս Առաքեալն զրէ „Ողջոյն տուելք մէկ մէկի՝ համբուրելով“ (Հոռմ. Ժղ. 16): Եյս բաներին նայելով՝ Հայոց եկեղեցին՝ կանոն դրած է, որ թէ պատարագ մատուցանօղ քահանայն և թէ պատարագ տեսանօղ ժողովուրդն մէկ մէկի հետ հաշտ լինելով՝ պատարագի շնորհաց արժանի լինին, և հաշտութեան նշանը ցուցանելոյ համար՝ ողջոյն տան մէկ մէկի՝ համբուրելով:

Եյս սովորութիւնն շատ հին է, և կայր ամենայն քրիստոնէից մէջ, ինչպէս կվկայեն Տերտուղիանոս, Կիւրեղ Երուսաղէմացի, և այլ վարդապետք: Եյժմ Լատինացւոց եկեղեցումը քահանայն հաղորդութիւնը ճա-

շակելոյ ժամանակին՝ ողջոյն կտայ սարկաւագին, սարկաւագն ևս՝ կիսասարկաւագին, և կիսասարկաւագն դպիրներուն :

24.

Ուստի է Եկեղեցուածը պատուքաբէն յեպոյ Առանձանելոյ սովորութիւնն մեր եկեղեցումը՝ մնացած է Ազաղէն։ Իսկ Ազաղ (որ թարգմանի՝ Աէր) կոչում էր հին ժամանակը այն կերակուրն՝ որ հարուստ քրիստոնեայքն պատրաստում էին, և յետ պատարագի աղքատաց հետ ՚ի միասին նըստելով՝ սիրով ուտում էին (Գործ. թ. 46): Յետ ժամանակաց Ազաղի սովորութենէն ուրիշ անկարգութիւններ սկսան երևիլ։ Այս պատճառաւ բարեկարգ Առաջնորդքն Ազաղը խափանեցին. բայց այնոր մասնաւոր նշաններն մնացին, ինչպէս մեր մէջ Առաքանելոյ սովորութիւնն, և Յունաց մէջ՝ փոխինդ (բոհրած ցորենի ալիւր) տալոյ սովորութիւնն :

25.

Ե՞նչ է պարհաւառ՝ ո՞ր մեր աղջին զբրեստուի  
ձննդեան աօնը Յունվարի 6 ին կատարե. էսէ  
ուրեշ + բիստոնեայ աղջերն Դեկտեմբերի 25 ին  
կիառարեն:

Առաջին ժամանակներումը, այսինքն՝  
Քրիստոնեութեան սկիզբէն մինչև չորրորդ  
դարու վերջը կամ մինչև հինգերորդ դարու  
սկիզբը ուրիշ քրիստոնեայ ազգերն ևս մեզ  
նման այս տօնը կատարում էին Քրիստոսի  
Վկրտութեան տօնի հետ 'ի միասին Յուն-  
վար ամսոյ 6 ին, ինչպէս կվկայեն ոչ միայն  
մեր վարդապետքն, այլ և օտարազգի պատ-  
մազիրներն և հեղինակներն: (Տես իմ նոր  
տպած ընդարձակ Հրահանդի մէջ. յեր.  
217—223): Բայց յետոյ նոքա բաժանեցին  
այս երկու տօնը մէկ մէկից. Վկրտութեան  
տօնը թողին Յունվարի 6 ին, և Կօննդեան  
տօնը սկսան կատարել Դեկտեմբերի 25 ին,  
ինչպէս որ այժմ կատարում են:

Այս երկու տօնից բաժանման երկու  
պատճառք կային, մինն՝ Երուսաղէմացւոց

կողմանէ, և միւսն՝ Հռովմայեցւոց կողմանէ։  
Բայց Հայոց ազգն որովհետեւ չունէր պատ-  
ճառ բաժանելոյ, լաւ համարեցաւ դիւր հին  
սովորութիւնը անփոփոխ սղահել մինչեւ<sup>ցայժմ</sup>։

Երուսաղէմացւոց կողմանէ պատճառն  
այս էր, որ նոքա Յունվարի 6 ին՝ կատա-  
րում էին նախ զՔրիստոսի Շննդեան տօնը  
Բեթղեհէմումը (որովհետեւ այն տեղ ծնաւ  
Քրիստոս), և տպա նոյն օրը Յորդանան  
գետը գնալով՝ կատարում էին զՄկրտու-  
թեան տօնը (որովհետեւ այն տեղ մկրտու-  
ցաւ Քրիստոս)։ Բայց այս երկու տեղեաց  
հեռաւորութիւնն մեծ դժուարութիւն և  
նեղութիւն էր տալի յԵրուսաղէմ բնակեալ  
քրիստոնէից և եկեղեցականաց՝ ձմեռնային  
ժամանակումը։ Այս պատճառաւ՝ Շննդեան  
տօնը Մկրտութեան տօնէն բաժանելով՝  
սկսան տօնել Գեկտեմբերի 25 ին, որ կա-  
րողանան առանց դժուարութեան այս երկու  
տօնը՝ իւրեանց տեղերումը հանդիսապէս և  
փառաւորապէս կատարել։

Հռովմայեցւոց կողմանէ պատճառն այս

էր, որ նոքա կռապաշտութեան ժամանակ  
կումը սովորութիւն ունեին Յունվարի 1 ին՝  
Եանվարիուս կուռքի տօնը կատարել մեծաւ  
հանդիսիւ, ինչպէս կվկայէ Մարկոս  
Եւրելիոս Կայսրն (1), և Փետրվարի 2 ին՝  
ուրիշ կռապաշտական տօն կատարել ՚ի  
յիշատակ Պերսեփոնէ կամ Փրօսերփինէ  
անուանեալ աղջկանն՝ որոյ համար առասպելաբանութեամբ կպատմեն, թէ Պղուտոն՝  
դժոխոց չաստուածն յափշտակեալ է. և  
զայս տօնս ևս կատարէին մեծ փառաւորութեամբ,  
այնպէս՝ որ բոլոր ժողովուրդն  
այն դիշերը ձեռքերնին ջահ կամ լապտեր  
բռնած՝ փողոցներումը ման կրգային, որպէս  
թէ զՊերսեփոնէն փնտոելոյ ելած են:

Այս երկու տօնախմբութեանց սովորութիւնն մնացած էր նաև քրիստոնէութեան ժամանակը թէ Հռովմայեցւոց և թէ Յունաց մէջ: Հռովմայ եկեղեցւոյ հայրապետքն կամելով բոլորովին խափանել այս երկու տօնից յիշատակը իւրեանց ժողովըդոց

---

(1) Կոր գրքի մէջ ու. ժզ:

միջէն՝ սահմանեցին Պեկտեմբերի 25 ին  
Քրիստոսի օննդեան տօնը կատարել, որ  
այսու պատճառաւ Քրիստոսի թղփատու-  
թեան տօնը ևս 8 օրից յետոյ՝ հանդիպի  
Յունվարի 1 ին (որ օրը Եանվարիուս  
չաստուծոյն տօնն էր), և Տեառնընդառաջե  
տօնն ևս 40 օրից յետոյ՝ հանդիպի Փետրը-  
վարի 2 ին (որ օրը Պերսեփոնէի տօնն էր).  
որպէս զի այս երկու քրիստոնէական տօ-  
նից կատարմամբ՝ այն երկու կռապաշտական  
տօնքն Խափանուին, ինչպէս կվկայեն Լա-  
տինացւոց եկեղեցական պատմագիրքն, մա-  
նաւանդ Ճիաքումօ Մօրէլլի եպիսկոպոսն՝  
իւր շինած Գաղղիական լեզուի բառարա-  
նումը, որ տպուած է Փարիզումը 1625  
թուականին։ Այս զրքումը հեղինակն իրա-  
ւունք կրտայ Հայոց ազգին՝ որ զիւրեանց  
նախնական սովորութիւնը պինդ պահած  
են, և չեն կամեցած՝ առանց պատճառի  
փոփոխութիւն առնել։

26.

Օ սարի օրը՝ + ահանայից սպիտակ շուրջառով  
դժեռաբանութիւն, և ակրացուաց սպիտակ շապէի  
հագնիւն՝ է՞նչ իսրհուրդ սոնի:

Մատթէոս աւետարանիչն պատմում է,  
թէ հրեշտակն՝ որ նստած էր Քրիստոսի  
գերեզմանի քարին վերայ, և Քրիստոսի  
յարութիւնը աւետարանում էր, ունէր լու-  
սաւոր զէմք փայլակի նման, և սպիտակ շոր  
ձիւնի նման: Եւ Մարկոս աւետարանիչն  
զբում է, թէ իւղաբեր կանայքն երբ որ Քրի-  
ստոսի գերեզմանը մտան, տեսան մէկ երի-  
տասարդ՝ սպիտակ շապիկ հագած:

Ինչպէս հրեշտակն սպիտակ շորերովն  
ցուցանում էր ուրախութիւնը և Քրի-  
ստոսի յարութեան տօնը, այսպէս ևս Հայոց  
եկեղեցին կամելով յայտնել Քրիստոսի յա-  
րութեան համար ունեցած ուրախութիւնը,  
կանոն է զբած՝ որ այն օրը քահանայք և  
դպիրք եկեղեցումը սպիտակ զգեստներով  
զարդարւին:

Ե՞րբ անը և ինչու համար գումարության  
առաջին Տիեզերական ժողովն :

Առաջին Տիեզերական կամ Ընդհանրական ժողովն զումարուեցաւ Նիկիաքաղաքումը (որ Տիւթանիա զաւառումն է) 325 թուականին Քրիստոսի՝ մեծին Կոստանդիանոսի ժամանակը՝ Երիոս Հերետիկոսապետի ընդդեմ, որ ուրանում էր Քրիստոսի Աստուածութիւնը :

Եյս ժողովումը հաւաքեալ էին յամենայն քրիստոնեայ ազգերից՝ երեք հարիւրտասն և ութ Հայրապետք, յորոց մինն էր մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին Երիստակէս :

Սոքա միաձայնութեամբ՝ յետ զատապարտելոյ զԵրիոսը և զնորա մոլորութիւնը՝ հաստատեցին ուղղափառ հաւատոյ Հանգանակը, զաւանելով դՔրիստոս Աստուած յԵստուծոյ՝ Եստուած ճշմարիտ՝ յԵստուծոյ ճշմարտէ ծնունդ, և ոչ արարած“։ Կշանակեցին ևս Զատկի տօնախմբութեան

օրը՝ ընդդէմ Չորեքտասանեայք կոչեցեալ  
հերետիկոսաց, որ ուսուցանում էին՝ թէ  
պէտք է Օատիկը՝ Հրէից հետ ՚ի միասին  
տօնել Մարտ ամսումը ծնած լուսնի 14 ին։

Այս ժողովոյս կանոնները՝ ժողովով  
վերստին հաստատեցին նոյն տարումը Աեղ-  
բեստրոս հայրապետն Հռովմայ՝ ի Հռովմ,  
և մեր Գրիգոր Լուսաւորիչն՝ ՚ի Վաղար-  
շապատ։

Երիսս ծնած էր Աղեքսանդրիա քաղա-  
քումը՝ որ մօտ է Եղիպտոսի. սարկաւագ  
ձեռնազրեցաւ Պետրոս Եպիսկոպոսէն Աղե-  
քսանդրիոյ, և յետ նորա մահուանն քա-  
հանայ եղեւ նոյն քաղաքի եկեղեցւոյն 315  
թուին. և սկսաւ ուսուցանել՝ թէ Որդին  
Աստուծոյ արարած է. և թէ՝ Հայր Աս-  
տուած մեծ է քան զնա, և այլն։ Առա  
հետեւողքն կոչուեցան Երիսսեանք կամ Ե-  
րիսսականք։

Երբ, ո՞ր և ինչո՞ւ համար եղեւ երկրորդ  
Տէւլէրական ժողովն :

Երկրորդ Տիեզերական ժողովն եղեւ Կո-  
ստանդնուպօլսումը 381 թուին՝ Մեծին  
Թռէոդոսի ժամանակումը՝ Մակեդոն հերե-  
տիկոսապետի ընդդէմ, որ ուրանում էր  
Հոգւոյն սրբոյ Աստուածութիւնը :

Այս ժողովումը գումարուեցան յամե-  
նայն քրիստոնեայ ազգերից՝ հարիւր յիսուն  
Հայրապետք. որք յետ դատապարտելոյ  
զՄակեդոնը և զնորա մոլորութիւնը, զրե-  
ցին նոր Հանգանակ հաւատոյ՝ դաւանելով  
զՀոգին սուրբ՝ Տէր, Աստուած, պաշտելի  
և երկրպագելի ընդ Հօր և Որդւոյ :

Ժողովեալ Հայրապետաց մինն ևս էր  
մեր սուրբ Մեծն Կերսէս Կաթողիկոս:

Մակեդոն՝ Կոստանդնուպօլսոյ Պատրի-  
արք էր, և կոչուեցաւ Հոգեմարտ, որով-  
հետեւ ուսուցանում էր՝ թէ Հոգին սուրբ  
արարած կամ ստեղծուած է, ուստի և չէ  
արժանի երկրպագութեան :

Երբ, առ և ինչո՞ւ համար եղեւ երբեր  
Տիեզերական ժողովն:

Երրորդ Տիեզերական ժողովն եղեւ 431  
թուին՝ Փոքր Թէոդոս Կայսեր ժամանակը՝  
Եփիսոս քաղաքումը:

Այս ժողովս գումարուեցաւ 200 Հայ-  
րապետներից, որոց մէջ երեսելի էր Կիւրեղ  
եպիսկոպոսն Աղեքսանդրիոյ: Առքա միաբա-  
նութեամբ դատապարտեցին և նզովեցին  
զԱնտոր Հերետիկոսապետը, որ գՔրիստոսի  
իսկապէս Որդի Աստուծոյ լինիլը ուրանում  
էր՝ ասելով, թէ նա շնորհօք միայն է որդի  
Աստուծոյ (ինչպէս ամենայն սուրբքն կամ  
արդարքն), և ոչ թէ էութեամբ կամ բնու-  
թեամբ. և զԱստուծածին Կոյսն՝ կոչում  
էր Քրիստոսածին կամ Մարդածին:

Թէոդոս Կայսրն իւր զրովն հրաւիրած  
էր և զմեր սուրբ Աահակ Պարթեւ հայրա-  
պետը՝ որ դտնուի ժողովումը. բայց նա  
գործ ունելով Պարսից Վասմ թագաւորի  
հետ և Պարսկաստան գնալով՝ չկարաց

գնալ յԵփեսոս. միայն զրով յայտնեց իւր  
կամքը՝ թէ ինչ որ ժողովը սահմանէ՝ ինքն  
ևս կհամաձայնի և կընդունէ:

Ժողովը վերջանալէն յետոյ՝ երեելի և  
ապիսկոպոսներէն ոմանք, այսինքն՝ Աիւրեղ  
Աղեքսանդրացին, Վաքսիմիանոս եպիսկո-  
պոսն (որ Պատրիարդ եղեւ Կոստանդնու-  
պօլսի), Պրոկոպ եպիսկոպոսն Աիզեկոն քա-  
ղաքի, և Եկակ եպիսկոպոսն Վելտինոյ,  
միաբանութեամբ յատուկ թուղթ զրեցին  
Հայերուն՝ յայտնելով նոցա ժողովոյն կա-  
նոնադրութիւնները և Կեստորի չար ա-  
ղանդը կամ մոլորութիւնները. և զայն  
թուղթը Վաքսիմիանոս Պատրիարդի ձե-  
ռամբ յանձնեցին մեր Յարդմանիչներուն,  
որք էին Գեոնդ, Յովհան, Յովսէփ, Ար-  
ծան, Եղնիկ, Առիւն, և այն ժամանակը  
գտնուում էին Կոստանդնուպօլսումը: Եոքա  
ևս իսկոյն եղան եկան Հայաստան՝ երբ որ  
սուրբն Առհակ Պարթև Պարսկաստանէն  
նոր վերադարձ էր:

Սուրբն Առհակ այն եպիսկոպոսների  
զրած թուղթը ստացածին պէս՝ շուտով

եպիսկոպոսներ և վարդապետներ կանչելով՝  
ժողով գումարեց Աշտիշատ քաղաքումը  
(որ Տարոնոյ երկրութիւն է). և յետ կարդալ  
տալոյ զթուղթը և զԵփեսոսի ժողովոյն  
կանոնները՝ ընդունել և հաստատել տուաւ  
զանոնք՝ դատապարտելով և նզովելով  
զԵփետորը և զնորա ընկերները:

“Եետոր” Կոստանդնուպօլսի Պատրիարք  
էր նստած 428 թուին: Երբ որ Եփեսոսի  
ժողովն եղև, երկք անգամ կանչեցին զնա  
այն տեղ. բայց նա չգնաց: Ուստի ժողովոյ  
գումարման երկրորդ օրումը գիր զրեցին  
նմա այսպէս. „Եստուծոյ շնորհօք ժողու-  
„վեալ սուրբ Ախւնհողոսէս” որ գումարու-  
„եցաւ Եփեսացւոց մայրաքաղաքումը: —  
„Եոր Յուղա “Եետորիդ: —Գիտնան՝ որ  
„Դու ամբարիշտ քարոզութեանցդ համար՝  
„այս Յունիս ամսոյ 22 ին սուրբ Ախւն-  
„հողոսիս հրամանաւ դատապարտեալ ես  
„այսուհետեւ, և յամենայն եկեղեցական  
„աստիճանէ զրկուած ես“:

Թաէողոս Կայսրն աևս ընդունելով ժողո-  
վոյն վՃիռը՝ աքսորել տուաւ զԵփետորը,

և նորա տեղ Պատրիարք կարգեց զՄաք-  
սիմիանոս եպիսկոպոսը : “Եստոր մեռաւ  
աքսորանաց տեղումը , որ կոչուում էր  
„Յովասիս“ :

30.

Երբ և ինչու համար եղել քաղիկեդոնի ժողովն :

Վաղկեդոնի ժողովն եղել 451 թուին՝  
Յունաց Մարկիանոս Կայսեր հրամանաւ-  
ընդդեմ Եւտիքէս Հերետիկոսապետի , որ  
յառաջ ևս գատապարտեալ էր Փլաքիանոս  
Պատրիարքէն Կոստանդնուպոլսի՝ մասնաւոր  
ժողովով՝ զոր գումարել տուած էր նոյն  
Պատրիարքն յ32 եպիսկոպոսներից և 'ի 23  
վանահայրներից 448 թուին :

Խոկ Վաղկեդոնի ժողովոյն հայրապետաց  
քանի լինելոյն համար Պատմիչներու բանքն  
միակերպ չեն : Վասն զի Եփկեփորոս Պատ-  
մագիրն (1) զհայրապետաց թիւը կդնէ 636,  
որ Եփկիոյ ժողովոյն հայրապետաց կրկնա-  
պատիկ թիւն է : Խոկ Մարկեղինոս Ճամա-

---

(1) Յեկեղ. Պատմ. գիրք ժե. զւ. թ:

նակաղիրն (2), Փոտ Պատրիարքն (3), և  
Բալսամոն (4), կդնեն՝ 630:

Այս ժողովում մեր Հայրապետներից  
կամ վարդապետներից ոչ ոք չգտնուեցաւ:  
Պատճառն այն է՝ որ այն ժամանակումը  
երբ որ Յոյնք զիւրեանց եկեղեցին՝ իւրեանց  
հերետիկոսներու յիմարական մոլորութիւն-  
ներից մաքրելու համար հոգս էին անում՝  
ժողով գումարելով, Հայք զիւրեանց մա-  
քուր եկեղեցին վերստին կանգնեցուցին՝  
զիւրեանց արիւնը թափելով և պատերազ-  
մելով ընդդեմ Յաղկերտի Պարսից թաղա-  
ւորին, որ ամենայն զօրութեամբ հետևում  
էր զըոլոր Հայաստանը կրակապաշտութեան  
խաւարի մէջ ընկղմել, և Վրիստոնէու-  
թեան անունը բոլորովին ջնջել:

Այս ժողովոյս վերայ՝ ոչ միայն Հայոց՝  
Ասորոց և այլոց ազգաց մէջ տարածայ-  
նութիւններ եղեն, այլև նոյն իսկ Յունաց

(2) ԳՆ. ԺՊ:

(3) 'Ի Պատմ. Եօթն ժողովոց. ՊԼ. Պ:

(4) 'Ի Համառօտ Պատմ. ժողովոց:

մէջ 80 տարիի չափ մեծ հակառակութիւն  
կայր. վասն զի ոմանք ընդունում էին զայն  
ժողովը, և ոմանք մերժում էին: Բաց ՚ի հա-  
սարակ ժողովրդոց՝ Յունաց Կայսերքն ևս  
զանազան կարծիք ունեցան այս ժողովոյս  
վերայ. ոմանք ևս հրաման կամ հրովար-  
տակ տարածեցին ամենայն տեղ՝ որ մեր-  
ժեն կամ չընդունեն զայն. Վասիլ Կայսրն  
475 թուին, Օհնոն Կայսրն 476 թուին,  
և Սնաստաս Կայսրն 491 թուին:

---

31.

Ու՞ն+ Եղեն հալածոց+ Քրիստոնէից  
առաջին դարեւումը:

Յետ Քրիստոսի համբարձման՝ նախ Նրէ-  
այք սկսան հալածել Երուսաղէմումը բնա-  
կեալ քրիստոնեաները, և սուրբ Ատեփան-  
նոս սարկաւագը բռնեցին քարկոծեցին: Եւ  
այն ժամանակը քրիստոնեաներից շատերն  
փախան գնացին Ասմարիա քաղաքը. ոմանք  
ևս ցրուեցան Նրէաստանի զիւղերումը.  
Միայն Սոաքեալքն մնացին Երուսաղէմի մէջ:  
Եր. Ա. Աս.

Այս ժամանակի հալածողների մինն ևս էր  
Պօղոս, որ յետոյ դառնալով՝ ի Վրիստոսի  
հաւատքը՝ եղեւ Առաքեալ և Վարողիչ:

Յետոյ Հռովմայեցւոց Կայսերքն ևս ըս-  
կսան հալածել զքրիստոնեաները, ինչպէս  
Կերոն Կայսրն (64 թուին), Գոմետիանոս  
(93 թուին), Տրայիանոս (107 թուին),  
Ընտոնինոս (162 թուին), Աւերոս (202  
թուին), Մաքսիմենոս Յուլիոս (235 թու-  
ին), Գեկոս (250 թուին), Վաղերիանոս  
(257 թուին), Որեղիանոս (272 թուին),  
Գիոկղետիանոս (284 թուին), Յուլիանոս  
(361 թուին):

Բնոսիոս Պատմագիրն զբում է, թէ ա-  
ռաջին երեք դարուց միջոցումը միայն Հռովմ-  
քաղաքի մէջ քրիստոնեաներից նահատա-  
կուած են 300,000 հոգի. որոց միջից երե-  
սուն երկուքն Վահանայապետք էին: Եւ  
ուրիշ տեղերումը նահատակուածները ևս  
համարելով՝ բոլորի թիւն լինում է իրը  
շինդ միլիոն:

Գիոկղետիանոսի հալածումը այնքան սաս-  
տիկ էր, մինչ զի կարծում էին՝ թէ Վը-

Քիստոնէական եկեղեցին բոլորովին ջնջու-  
եցաւ աշխարհիս վրայէն. վասն զի իւր Տէ-  
րութեան տակ եղած գաւառներումը նա-  
հատակել տուած էր երկու միլիոնի չափ  
քրիստոնեայ մարդիկ :

Այս հալածանքներն դադարեցան չորրորդ  
դարու սկիզբը, այսինքն 306 կամ 307 թու-  
ականին, երբ որ մեծն Կոստանդիանոս Հռով-  
մայեցւոց Կայսր եղե, և կռապաշտութենէն  
դառնալով 'ի Քրիստոնէական հաւատքը՝  
համարձակութիւն տուաւ Քրիստոնէից :

Հայաստան աշխարհումը ևս եղեն մաս-  
նաւոր հալածմունքներ՝ մեր կռապաշտ թա-  
գաւորաց օրերում, մանաւանդ՝ Ընանէի՝  
Երգարու որդւոյն, Սանատրուկի՝ Երգարի  
քեռորդւոյն, երկրորդ Երուանդի, երկրորդ  
Երտաշիսի, և Խոսրովի՝ Տրդատայ հօրը:  
Մոցա օրերում նահատակուածների նշա-  
նաւորքն են՝ Առւրբ Առաքեալքն Քրիստոսի՝  
Թաղէոս և Բարթողոմէոս, Առւրբ Հայրա-  
պետն Եղղէ, Առւրբ Առյան Աանդուխտ՝ որ  
Սանատրուկի դուստրն էր, Առւրբ Ասկեանք՝  
հինգ անձինք, Առւրբ Առքիասանք՝ տասն

և եօթն անձինք, որպէս ապա և Առւրբն  
Վրիգոր Լուսաւորիչ, և Առւրբ Հովհանի-  
մեանք՝ երեսուն և եօթն անձինք, որք չար-  
չարուեցան և նահատակուեցան յառաջ-  
քան զՏրդատի դարձը 'ի սուրբ հաւատն  
Վրիստոսի :

32.

Աղջային Եկեղեցական ժողով Գումարելոյ սովո-  
րութիւնն էր սկսուեցաւ մեր առնել:

Ար հին մատենագրաց զրուածներից  
այսքանս միայն զիտեմք հաւաստեաւ, որ  
չորրորդ դարումը մեր Առաքելաջան Հովու-  
ապետներն սովորութիւն արին հետ զհետէ  
միաբան հաւանութեամք եպիսկոպոսաց և  
վարդապետաց, ևս և թագաւորաց, նախա-  
րարաց և իշխանաց, ժամանակ ժամանակ  
ժողովներ գումարել այլ և այլ տեղերում  
կամ հերձուածները և ուղղափառ հաւատոյ  
դէմ մոլորութիւնքը մերժելոյ համար, և  
կամ անկարգութիւնքը վերացընելով՝ պէս-  
պէս բարեկարգութեանց կանոններ հաստա-  
տելոյ համար :

33.

Չորրորդ դարում գումարուեցան աղքային եկեղեց-  
առաջան ժողովներն ուրին+ են:

Չորրորդ դարումը գումարուեցան Հայ-  
աստանի մեջ եցեւ աղքային եկեղեցական  
ժողովներ, որք են.

Ա. Ժաղան Վաղարշապատ՝ առաջին:  
Եյս ժողովումն, որ գումարեց Ա. Գրիգոր  
Լուսաւորիչ 325 թուին Քրիստոսի, ըն-  
դունեց մեր եկեղեցին Կիկիոյ առաջին տի-  
եզերական ժողովոյ սահմանադրութիւնը,  
այսինքն՝ հաւատոյ Հանգանակը՝ հանդերձ  
քսան կանոններով եկեղեցական բարեկար-  
գութեանց, որ բերած էր Ա. Արիստակէս,  
և նա ինքն Ա. Լուսաւորիչն՝ իրը կնիք  
հաստատութեան՝ յաւելացոյց այն ժամանակ  
նոյն Հանգանակի վերջումը այս բանս. „Խսկ  
մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյա-  
ւիտեանս, երկիրապատնելով սրբոյ Երրոր-  
դութեանն և միոյ Աստուածութեանն Հօր  
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ  
և յաւիտեանս յաւիտենից. ամեն“:

Բ. Ժաղսն Աշոկապուտ (1) առաջին:  
Եյս ժողովումն, որ գումարեց Մեծն Կեր-  
սէս Պարթե 365 թուին, հաստատուեցան  
քառասունի չափ կտնոններ թէ ժողովը ի  
և կրօնաւորաց օրինաւոր կենցաղավարու-  
թեան համար, և թէ վանքերի, աղքատա-  
նոցների, և այլն՝ շինութեան և բարեկար-  
գութեան համար:

Գ. Ժաղսն Վաղարշապատու՝ երկրորդ:  
Եյս ժողովումն, որ գումարուեցաւ 366  
թուին՝ նոյնպէս Մեծն Կերսէս Պարթե  
Հայրապետի օրերում, հաստատուեցաւ այն  
կանոնն, թէ „այնուհետեւ Հայոց Կաթո-  
ղիկոսն չձեռնադրուի Կեսարիոյ Յոյն եպիս-  
կոպոսապետէն, այլ՝ իւր համազգի եպիսկո-  
պոսներից միայն“։ Բաց յայսմանէ, նաև  
նոյն Ա. Հայրապետն պատուեցաւ նոր տիտ-  
ղոսով „Պատրիարք“։ Ուստի և հետագայ  
Կաթողիկոսներն ամենայն Հայոց իրաւամբք  
կոչուեցան և կոչուում են մինչև ցայսօր՝  
ոչ միայն Կաթողիկոս, այլ և Պատրիարք։

---

(1) Վաղարք է Տարոն գաւառումը, Ա. Կարապետի  
վանքի մօտ :

Եւ այսպէս կոչուում են միայն Կաթողիկոսքն Աշմիածնի: Իսկ Աղթամարայ և Սոյ Կաթողիկոսներն չունին իրաւունք Պատրիարքներն Երուսաղէմի և Կոստանդնուպօլսի չունին իրաւունք Կաթողիկոս կոչուելու:

34.

ՄԵՐ առժե մէջ +անք աշխային Եկեղեցական  
ժողով գումարութեցաւ մէնը ցայծաւ:

Չորրորդ դարեն սկսեալ՝ մինչև տասն և հօթներորդ դարու կէսը մեր ազգին մէջ գումարուած են միայն գումարուած և էօնն աղքային եկեղեցական ժողովներ զանազան ժամանակներում, զանազան տեղերում, և զանազան պատճառներով:

Վերջին ժողովն եղած է 1651 թուին, Երուսաղէմ քաղաքումը, Փիլիպպոս Կաթողիկոսի նախադահութեամբ: Եւ այն ժամանակէն մինչև յմեր օրերը այլ օրինաւոր եկեղեցական ժողով չէ գումարուած մեր ազգին մէջ:

Աստուածային պաշտամանց տեղին որո՞նք էին  
Հայաստանի մէջ՝ առաջին երեք դարերում էին:

Աստուածային պաշտամանց տեղեքն Հայ-  
աստանի մէջ՝ առաջին երեք դարերում էին.

թ. Եզեղէցի+ և Տագուան+ (փոքրիկ տա-  
ճարք), որք շինուած էին Եղեսիայում,  
Շաւարշանում և Կեսարիայում՝ 'ի թա-  
ղէոս Ըռաքելոյ. Որթվատ և Վանանդ գիւ-  
ղերում Գողթան գաւառի՝ 'ի Բարթուղի-  
մէոս Ըռաքելոյ. Գիս կամ Գիտ գիւղում  
Ուտի գաւառի՝ յԱղեշէ Ըռաքելոյ:

թ. Առանորայ+, որպիսի էին՝ Հոգեաց  
վանքն՝ որ կառուցած էր Բարթուղիմէոս  
Ըռաքեալն Ընձեացեաց գաւառում, և թա-  
նահատի վանքն՝ որ շինեց երկրորդ դարու  
կիսումը Միսիթար վանահայրն Ախոնեաց  
աշխարհում, և Տաթեու վանքն՝ որ շինու-  
ած էր Ատաթէոս Ըռաքելոյ նահատակուած  
տեղի վերայ՝ Բաղք դաւառում:

դ. Հաւատացելոց տրւնքն, այն տեղերում  
միայն, ուր չկային եկեղեցիք կամ վանորայք:

## ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Համառօտ Նկարագիրք երեելի Արանց և  
Տեղեաց, յիշատակելոց յԱզգային Եկեղե-  
ցական Պատմութեան:

1.

## ԵՐԳԵՐ

Երշամայ որդին էր, և չայոց թագաւոր.  
Նստէր Եղեսիա քաղաքումը (1), զոր ինքն  
նորոգեալ էր: Քրիստոսի հրաշագործու-  
թիւնները լսելով՝ հաւատաց նորա Եստու-  
ածութեանը, նամակ զբեց Կմա, և զպա-  
տասխանը ընկալաւ հանդերձ Անձեռագործ  
պատկերաւ: Յետոյ մկրտեցաւ 'ի թաղէոս  
Եռաքելոյ, և քրիստոնեայ թագաւորաց ա-  
ռաջինն եղեւ:

Երգար՝ ստուգաբանի առած այս, այ-  
սինքն՝ մեծ և երեելի մարդ:

(1) Եղեսիա քաղաքն կոչե ևս Ուռհայ կամ  
Ուռփայ:

2.

## ԵԳԵԹԸՆԳԵՎԱԾՈՒ

Հռովմայեցի էր. ատենադպիր եղև մեր  
Տրդատ Թագաւորին, և նորա հրամանաւ  
զրեց նորա գործքերը և Գրիգոր Լուսա-  
ւորչի քաշած չարչարանքները:

3.

## ԵՐԻՍԱԿԻՆ

Գրիգոր Լուսաւորչի փոքր որդին էր. ե-  
պիսկոպոս ձեռնադրուեցաւ իւր հօրէն. զնաց  
Նիկիոյ ժողովը, և բերաւ այն տեղէն Հան-  
դանակի (այսինքն՝ Հաւատամքի) օրինակը  
իւր հօր տեղը:

4.

## ԻՆԵԹՈՒԴԻՄԵՅՈՒ ԵԽԵՔԵԸ

Վրիստոսի երկոտասան աշակերտաց մինն  
էր, որ յետ քարոզելոյ զԵւետարանը զա-  
նազան արեելեան՝ աշխարհներում, եկաւ

մտաւ 'ի վիճակն Ա. թաղէոսի՝ 'ի հայրենիս  
մեր, ուր և Եռաքելական արդիւնաւոր վաս-  
տակներովն եղեւ յատկապէս „Հայտագանեացց  
Հայը հոգեւոր“։ և ասպա ըստ հրամանի  
Քրիստոսուրաց Անատրուկ թագաւորին  
նահատակուեցաւ 50 թուին՝ Երեբանոս  
Քաղաքումը։

5.

### ԳՐԻԳՈՐ ԼՈՒՅԵԿՈԲ

Հատ չարչարանք կրեց քրիստոնէական  
հաւատոյ համար՝ Տրդատ թագաւորի հրա-  
մանաւ. և Խոր Վիրապէն ելանելէն յետոյ  
(ուր մնաց տասն և հինգ տարի), մկրտեց  
զթագաւորը և զնախարարները, և զքոլոր  
մեր ազգը լուսաւորեց քրիստոնէութեամբ։  
Մեռաւ Խեղուհ սարումը՝ որ տեղ ձգնում  
էր։ Խորա հօր անունն՝ Ենակ էր, և մօր  
անունն՝ Աղոհէ։

6.

### ԳՐԻԳՈՐ ՄԵԳԻԱՏՐՈՍ

Մեծ իշխան էր Հայոց՝ Լուսաւորչի ցե-  
ղէն. շատ լեզուներ զիտէր՝ հայերէն, յու-

նարէն, տաճկերէն, պարսկերէն, արաբերէն,  
ասորերէն, և այլն։ Երեք օրումը հին Կտա-  
կարանի պատմութիւնը գրեց ոտանաւոր։  
Յունաց կայսերքն պատուեցին զնա Ա-  
ժեստուս անուամբ, որ թարգմանի „Վար-  
դապետ“։

7.

### ԳՐԻԳՈՐ ՆԵՐԵԿԵՑԻ

Խոսրովու՝ Ընձեւացեաց եպիսկոպոսի որ-  
դին էր. ‘Կարեկայ վանքումը ուսում առաւ  
Ընանիա տռաջնորդէն. եղեւ երեելի վարդա-  
պետ և վարժապետ, և զնոյն վանքի արե-  
ղաները կրթում էր հոգեւոր ուսմամբք և  
Սատուածաբանական դիտութեամբք։ Երբ  
26 տարեկան էր՝ գրեց Ավաղմոսի Երժ Եշէց  
զրքի մեկնութիւնը՝ ըստ խնզրոյ Գուրգէն  
թագաւորի՝ պարզ ոճով. և ապա ըստ Խընդ-  
րոյ բազում վարդապետաց յօրինեց Խրթին  
ոճով զայն հրաշալի աղօթազիրքը՝ որ կոչ-  
ւում է ‘Կարեկ։ Ունի զրած և ճառեր  
Առաքելոց վերայ, Սատուածանի վերայ,  
Խաչի վերայ, և այլն։ Վախճանեցաւ 52.

տարեկան, և թաղուեցաւ Կարեկայ վանքումը։ Ազօթագրքի վերջումը գովութեամբ յիշում է սա զիւր մեծ եղքայրը, որոյ անունն էր Յովհաննէս։

---

8.

### ԴԵՒԹՅՈՒՆ ԵՎՅԵՐՅՈՒ

Մովսիսի Խորենացւոյ քեռորդին էր, մեծ իմաստութեան աէր և փիլիսոփայ մարդ։ շատ փիլիսոփայական զրքեր ունի զրած՝ հայերէն և յունարէն։ Աս Ենյաղն կոչուեցաւ, անոր համար՝ որ չէին կարողանում յաղթել նմալեզուաւ կամ զրով։

---

9.

### ԵԶԿԵՒՏԻ

Աս ծնած էր Հայաստանի Առղք զիւղումը, վասն որոյ կոչի Առղքացի։ Առւրբ Ասհակայ և սուրբ Մեսրոպայ զլխաւոր աշակերտաց մինն էր։ շատ լաւ զիտէր ոչ միայն իւր բուն հայերէն լեզուն, այլ և

յունարէն, պարսկերէն և ասորերէն։ Եւր  
ընկերաց մինի հետ՝ որոյ անունն էր Յով-  
սէպ Պաղնացի, զնաց նախ յեղեսիա քա-  
ղաքը, և ապա 'ի Կոստանդնուպօլիս։ և որ-  
քան ընտիր զբքեր գտաւ Յունաց կամ Ե-  
սորւոց լեզուաւ, բոլորը հայերէն թարգմա-  
նեց։ Երբ որ վերադարձաւ 'ի Հայաստան,  
սուրբ Սահակայ և սուրբ Մեսրոպայ հետ  
աշխատեցաւ Եստուածաշունչը թարգմանե-  
լոյ։ Յետոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և  
Եռաջնորդ եղեւ Բագրեանդ գաւառի։ Շա-  
րադրեց մաքուր հայկաբանութեամբ մի յա-  
տուկ զիրք՝ Պարսից և Մանիքեցւոց ա-  
ղանդների դէմ։ Ունի ուրիշ մասնաւոր  
զրուածքներ ևս, բայց ձեռադիր են, և ամեն  
տեղ չեն գտնըւում։

## ԵԳԻԾԵ

Մեր թարգմանչաց աշակերտների մինն  
էր. վարդապետ եղեւ ապա եպիսկոպոս. զրեց  
ճարտասանական դեղեցիկ ոճով քաջին

Վարդանայ պատերազմը Պարսից դէմ: Կո-  
րա գերեզմանի վերայ եկեղեցի կայ շինած  
Հայաստանումը:

11.

### ԲՆՕԵՐԻԵՐԱ

Խեռն է Հայաստանի Վասպուրական  
զաւառումը՝ Վանայ ծովուն մօտ, որ տեղէն  
ելանէր երկաթ և կապար: Այս լեռան ստո-  
րոտումը սուրբ Յակոբ Մծրնայ հայրապետն  
աղօթելով՝ ջուր բղխեցոյց. և այն ջուրն  
կոչեցաւ „Սղբիւր Յակոբայ“:

12.

### ԹԵՇԵՈՍ ԵԱԵՐԵԱԼ

Քրիստոսի՝ եօթանասուն և երկու աշա-  
կերտաց մինն էր, և թռովմաս Առաքելոյ  
եղբայր: Աս գնաց յԵղեսիա (որ կոչի և  
Առհայ) քաղաքը, քարողեց անդ զաւետա-  
րանը, եկեղեցի շինեց, մլրտեց զԵրդար՝  
Հայոց թագաւորը, և նորա հետ՝ զնախա-  
րարները և զժողովուրդը, որ յառաջ կռա-  
պաշտ էին:

13.

### ԺԵՌԱԾԻՐԻ

Գաետ է 'ի Աիլեկիա: Այս գետոյ եզրումը  
սուրբ Գէջորդ անուամբ եկեղեցի և վանք  
կայ, որ տեղ բնակեցաւ երկար ժամանակ  
‘Աերսէս Լամբրոնացին՝ կարդալոյ և զրելոյ  
պարապելով:

14.

### ՀԵՅՎԱԾԱԿԵՆ

Ե հին քաղաք 'ի Հայկայ շինեալ Հայ-  
աստանի Հարք գաւառումը: Այն տեղ է  
Բէլայ կամ ‘Աերբովթայ բռնաւորի զերեղ-  
մանն՝ զոր սպանեց մեր քաջ և հաստա-  
բազուկ նահապետն Հայկ՝ երեքթեան նե-  
տիւ, և կոչե 'ի ռամիկաց „Աատանայի զե-  
րեղման“:

15.

### ՀԵՊԻՒՆԵ

Աբգար Թագաւորի կինն էր՝ և Հայոց  
Թագուհի: Յետ Աբգարու մահուան գնաց  
յԵրուսաղէմ. և որովհետեւ սովի ժամա-

նակ էր, շատ ցորեն գնեց և բաժանեց աղքատաց. և ինքն այն տեղ վախճանեցաւ և թաղուեցաւ, ինչպէս զրէ Յովսեպոս պատմադիրն Հրէից:

16.

## ՄԵՍՐՈՊ

Վարդան անուն բարեսկաշտ մարդոյ որդի էր, Տարոն գաւառի Հացեկաց զիւղէն: Աս մանկութեան ժամանակէն վարժուած լինելով Հելլենական դպրութեամբ և զիտութեամբ, և քաջ զիտելով ոչ միայն իւր հայրենի լիզուն, այլ և Պարսից և Եսորւոց լեզուքը, աշակերտեցաւ Մեծին Կերսիսի Պարթեի, և եղե նորա զրագիր: Եպա թագաւորական պալատումը ատենադպրի պաշտօն կատարեց՝ Վարազդատ, Երշակ երրորդ, Վաղարշակ երկրորդ, և Խոսրով երրորդ թագաւորների օրերում, այն է՝ 384 թուականէն մինչեւ 390 թուականն: Յետ այնուրիկ թողլով զայս աշխարհական զրադալից պաշտօնը, գնաց առանձնացաւ Գողթան Եր. Ա. Աս.

գաւառի վանքերի մէկին մէջ, ուր և նախ  
'ի կարգ վանականութեան մտանելով, և  
ապա քահանայ ձեռնադրուելով՝ իւր առա-  
քինահրաշ վարուքն սքանչելի օրինակ եղե  
ամենայն անապատաւորաց։ Ճողովեց նա  
իւր մօտ աշակերտաց բազմութիւն, կրթեց  
նոցա 'ի հոգեոր ուսմունս և յառաքինա-  
կան վարս, և ապա նոցա հետ 'ի միասին  
դուրս գալով յանապատից՝ սկսաւ Գողթան  
գաւառի մերձակայ տեղերում քարոզել և  
ուսուցանել Աստուածային պատուիրանք-  
ները, կարգալով 'ի լուր ժողովրդեան Առւրբ  
Գիրքը յունարէն կամ ասորերէն, և թարգ-  
մանելով և մեկնելով հայերէն։

Սկսրուց՝ յետ բազում աշխատութեանց,  
406 թուին Քրիստոսի, վերնապարգև շնոր-  
հօքն հնարեց Հայոց լեզուիս երեսուն և  
վեց նշանագիրքը յԵսէէ մինչև յԱՅէ, որ-  
պէս ապա նաև Վարաց և Եղուանից զբերը։

Երանելիս այս առ Աստուած փոխեձաւ  
Փետրուարի 14 ին 441 թուականին, երբ  
որ ինքն 80 տարեկան էր։

17.

## ՅԱՎՀԵՆ ՄԵԴԻՍԱՌԻՒՄ

Մեր թարգմանչաց աշակերտաց մինն էր. Կաթողիկոս եղեւ Հայոց՝ յետ վախճանի Գիւտ կաթողիկոսի՝ Վահան Մամիկոնեան Սպարապետի օրերումը. և վեց տարի կաթողիկոսական իշխանութիւն վարելէն յետոյ՝ վախճանեցաւ սրբութեամբ 81 տարեկան։ Սա որովհետեւ ուսեալ մարդ էր՝ շատ շարականներ և աղօթքներ զրեց, որք զրուած են Ճամադրքի մէջ, և կարգացւում են մեր եկեղեցումը։ Պատարագի Խորհրդատերը և հարստացոյց սուրբ Ծարսղի Կեսարացւոյ և Յովհաննու Ասկերերանի աղօթքներով. որոյ մէջ և „զՏէր Աստուած զօրութեանց“ աղօթքը ինքն յաւելացոյց։ Ունի նա և զանազան խրատական ձառեր՝ զեղեցիկ Հայկանութեամբ զրուած։

18.

## ՆԵՐՍԻՆ ԼԵՄՐԵՐՆԵՑԻ

Օշն իշխանի որդին էր՝ շատ ուսեալ և ճարտարախօս մարդ. եպիսկոպոս եղեւ

քսան և հինգ տարեկան։ մեռաւ քառասուն և հինգ տարեկան։ Շատ ճառեր՝ մեկնութիւններ և շարականներ ունի դրած։

19.

### ՆԵՐՍԻ ՇԱՐԱՎԱՐ

Եպիրատ իշխանի որդին էր՝ Լուսաւորչից ցեղէն, որ Հռոմելլայ բերդումը բնակելոյն պատճառաւ՝ Ալայեցի ևս կոչուեցաւ. բայց Շնորհալի մականունը ստացաւ ըստ արժանւոյն այնոր համար՝ որ լի էր Եպատուածապարդեւ շնորհօք։

Առ ձնաւ 1098 թուականին Քրիստոսի, ուսում առաւ Ստեփանոս վարդապետէն՝ որ Կարմիր վանքի Ըռաջնորդն էր։ Երեսուն և եօթն տարեկան հպիսկոպոս ձեռնադրուեցաւ. վաճառուն և ութ տարեկան Կաթողիկոս օծուեցաւ յիւր եղբօրէն՝ Գրիգոր Կաթողիկոսէն. վախճանեցաւ եօթանասուն և հինգ տարեկան 1173 թուականին Քրիստոսի, Օգոստոսի 13 ին. և նոյն օրը՝ որ էր Հինգշաբաթի՝ նորա յատուկ տօնն

սահմանուեցաւ մեր ազգումը՝ ամենայն եւ<sup>ա</sup>  
պիսկոպոսաց հաւանութեամբ։ Գերեղմանն  
Հռոմելայումն է, և պատուի ոչ միայն 'ի  
քրիստոնէից, այլ և յայլազգեաց։

Ես շնորհալի և սուրբ Հայրապետս քաջ  
բանաստեղծ էր, ընտիր երգաբան, լուսաւոր  
մեկնիչ, և խորիմաստ Աստուածաբան։ Ետա  
զրուածքներ ունի քաղցր ոճով՝ արձակ և  
ոտանաւոր, երգեր, շարականներ, և աղօթք-  
ներ, որոց մինն է „Հայութագով Խոսութա-  
նին“, որ քսան և չորս տուն է՝ ըստ թը-  
ւոյ ժամուց աւուր։

20.

ՈՉ ԵԿԵՆ

Մեծ զիւղ է Եջմիածնի մօտ։ Եյն տեղ  
է գերեղմանն երանելի Մեսրոպ վարդապե-  
տին, որ մեր՝ և Արաց և Աղուանից (1)  
դրերը ստեղծեց։

(1) Աղուանք՝ աղդ էր յառաջ եկած Ախուակէն,  
որոյ մականունն Աղու էր, այսինքն Քաղցր իսկ Ահ-  
սակ Գեղամայ որդին էր՝ Հայկայ ցեղէն։

### ՅԱՒԳԱՅՈՒՅՑ

~~159  
164  
361  
131~~  
 Հին և հարուստ քաղաք էր Հայաստանի  
Վասպուրական նահանգումը՝ Երասխ գե-  
տոյ մօտ, զորոյ բնակիչները՝ որ Հայք էին,  
Շահաբաս Պարսից թագաւորն քշեց տա-  
րաւ յիւր երկիրը, և Սսպահան քաղաքի  
մօտ շինել տուաւ նոցա համար զեւոյ Քո-  
ղայ քաղաքը 1606 թուականին Վրիստոսի:  
Եյս քաղաքէս էր Սղեքսանդր Սռաջին՝  
Հոյոց Կաթողիկոսն, որ օծուեցաւ յէջ-  
միածին 1707 թուականին Վրիստոսի:

### ՎԵԴԱՐԾԱՊԵՏ

Երքայանիստ քաղաք էր Հոյոց՝ Երա-  
րատեան նահանգումը՝ Վասաղ գետոյ մօտ:  
Յառաջ կոչէր Երախմեդ քաղաք, որովհեաւ  
այն տեղ կար Երախմիս չաստուածոյ մե-  
հեանն: Յետոյ փառաւոր ևս շինուելով  
Վարդգէս իշխանէն՝ որ մեր Երուանդ թագա-  
ւորի քեռայրն էր՝ կոչեցաւ Եւան Վարդ-

գիսի։ Բայց վերջը 197 թուականին Գրիստոսի Վաղարշ թագաւորն նոր պարսպով ամրացուցանելով զայս քաղաքը՝ իւր անուամբ կոչեց Վաղարշապատ։ այլք ևս կոչեցին “Ե՞ր Քաղաք”։ և ոմանք տեղւոյն տափարակութեանը նայելով՝ կոչեցին Քաղաքութաղ։

Այն տեղ է Կաթողիկոսական Եթոռն ամենայն Հայոց՝ Սուրբ Եջմիածին, որ շենուեցաւ Տրդատ թագաւորի և Գրիգոր Լուսաւորչի ժամանակին, այսինքն 303 թուին Գրիստոսի

23.

### ՎՐԹԱՆԿԵՌ ԵՒ ԱՐԲ ՈՐԴՅԵՐԸ

Վրթանէս Գրիգոր Լուսաւորչի մեծ որդին էր։ Կաթողիկոս եղեւ Հայոց՝ յետ մահուան իւր եղբօր Երիստակիսի։ Սորտ որդիքն էին՝ սուրբն Գրիգորիս, և սուրբն Յուսիկ։ Գրիգորիս՝ երբ որ տասն և հինգ տարեկան էր՝ Կաթողիկոս ձեռնազրեցաւ Եղուանից և Վրաց՝ Հրամանաւ Տրդատ թագաւորի։ Խակ Յուսիկ՝ Կաթողիկոս եղեւ Հայոց՝ յետ իւր հօր մահուան։

## ՕՏԵՅ

Հայոց նախարարների մինն էր՝ Ամատու-  
նեաց ցեղէն, բարեպաշտ և իմաստուն մարդ:  
Առ յիտ սպանման Խոսրով թագաւորի՝  
զնորա զուստը (որ կոչւում էր Խոսրովի-  
դուխտ) ազատելով՝ ի ձեռաց Պարսից, որք  
կամենում էին բնաջինջ առնել զիսոսրովի  
ցեղը, տարաւ պահպանեց Համի կամ Կամախ  
անուանեալ ամրոցումը մինչև ցվերադառնալն  
Տրդատայ Հռովմէական զօրօք՝ ի Հայաստան:  
Ուստի և պատուեցաւ՝ ի նմանէ՝ Հազարա-  
պետութիւն ստանալով. որ մեծ պաշտօն  
էր: Առ հանեց և զԳրիգոր Լուսաւորիչը՝ ի  
Խոր Անիրապէն, ըստ աեսլեան Խոսրովիշ-  
դիսոյ, և ապա քարողութեամբ նորա հա-  
ւատալով՝ ի Քրիստոս՝ մկրտեցաւ. Տրդատայ  
և այլ նախարարաց հետ՝ ի միասին:

ՎԵՐՃ:



Bucheinband von  
JOSEF ERDMANN  
BONN, Dottendorferstr. 144